

կարելի և մարդկային ֆիզիքական կարողութիւնէ վեր բան է:

Ահա պատճառն, որ ոչ թէ միայն Սիմէօն Վարդապետի ապացուցանելովն, իմ ականատես լինելովն, այլ ինքն պատմութիւնն և այժմեան էս դաշտերի զրութիւններն և Հայերի գնդի Խոր-վիրապէն ուղղեորին ցոյց են տալիս, որ էս տեղ-րանքն ունին էն ամեն պայմաններն, որոնք մեր ականատես նախնիքն ընծայում են նրան: Հաստատուն է յոյս, որ պարոն Բաֆին համաձայն-վի ինձ հետ և չսէ՛ Մակուն. ոչ մի ընդարձակ դաշտ չէ յիշում մեզ Աւարայրին և մի գետ Տըղ-մուտը, ընդհակառակն, ուրախ կլինէի թէ նա իւր կարծիքը հաղորդէր ինչ միջոցաւ և կամենար, միայն թէ ինչպէս մին անդրադէտ ուղղեցոյցի կամ Մահմետական պառաւ կնկայ խօսքերը, նոյնպէս էլ քարաժայռի վերայ ծակերն, որ Պարսիկներն Մահմետ Հանրֆէին են ընծայում և որոց նմա-նը չատ տեղ կպատահի Ասիայումը, ներս չբերէր որպէս ապացուցութիւններ, առ ի ջրել մեր ստու-գապատում՝ երանելի նախնիքների ասածը:

### ԳԱՆՈՒՍԻ ԵՒ ԻՐԱՊԱՆԷԱՆ.

ԱՆՊՐԵՄԵՐ. 1872.

Ի ԹԵՖԷԼ:

## ՃԱՆՆՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ

(ՇԵՐՈՒՆԻՆԻՆԷ)

Քաջածանօթն ուսումնական աշխարհին, ընդ երկար ծանապարհորդութեանին որ յԱրեւելս մա-նաւանդ ի կողմանս հարաւային Արաբիոյ, Ա. Քոն Արիգէ, հաղորդեաց ինձ գնտեսեալ տեղե-կութիւնս զարեւելեան առասպելացն զքաջաց և զմոզական ուսմանց. « Սնոտիապաշտութիւնն գտանի յամենայն ազգս երկրի սկսեալ ի լուա-ւորեալ Եւրոպացոցն յակարամիտն Եթովպացի. այն և զարմանալի նմանութիւնք և համաձայ-նութիւնք տեսանին ի նոսա. ո՞րք ոչ յիշեսցէ զառասպելն որք զբաւելին զմատաղ միտս ման-կական հասակի մերոյ ի զարմանս և յերկիւղ:

« Ի մոռացի զժամանակն, յորում տղայական երեւակայութիւնն ցնորական ձեւ և կերպարանս յօրինէր ի պահպանեալ դանձն քաջաց, ի սորա-րեակ ողիսն, ի ծիւաղն, ի մարգարետիսն առ առուակօք տայր կաքաւել Երիւանդ 21) և յան-տառս թագաւորել շահապետ ոգւոյն. Այսպիսի տղայական կարծիք և սնահաւատութիւնք ան-թիւք են առ Արաբացիս և առ ազգս Արեւելեան. ուստի և յանդատին ի դեւահաս տիեզն խանգա-րեն շիթիկն զբոցալառ երեւակայութիւն և յրա-տակութիւն մտաց. այսպիսեօք ծանրացեալ երե-ւակայութիւնք զաւերական ի բնակութիւն տան քաջաց, և զդանձն դտեալս յայնպիսի տեղիս ի պահպանութիւն նոցա հաւատան. յարաքան-չիւրում լերին ասին լինել յիշատակեալ ճիւա-ղացդ և հսկել ի վերայ ծանրալին ականց և ոս-կոյ, և ըստ կարծեաց նոցա ողիքը թափառին ի բազմամարդ փողոցս, յանապատս, յանոտս, ի ջուրս, մինչև անգամ ի տղմային և ծածուկ տե-ղիս բնակարանաց. համարեն լինել և յամենայն բնական երեւոյթս, ի կայծակն, ի շրջմոլիկ հօւրն և լն. համաձայնութիւնս այս՝ պարզապէս ցուցա-նէ թէ հաւատալն յայսպիսի գերագոյն էակս (յո-րրս ցուցանին բնական բնութեանն զօրութիւնք և տալն նոցա զինքնական կառավարութիւն և զուղղակի ազդմունք ի վերայ մարդկան) անդէն ի սկզբանն արմատացեալ է միանգամ ի խորս հոգւոյ մարդկային. և դաստիարակութիւնն տա-կաւին չխնաց զարմատս նորա:

« Առ Մահմետականս հաւատալն այսպիսի գո-յութեանց սուրբ է ըստ Աուրանին. և զմտաց-ծին աւանդութիւնս 22) և առասպելս իւրեանց ի վերայ քաջաց ի կարգս որոշեալ ունին. ըստ այնմ՝ ողիք կամ քաջք առ նոսա բաժանեն հե-տեւեալ կարգաւ. բարձր քան զամենեանն են քաջք (Ճէնք), որք են ընդ մեջ մարդկան և հրեշ-տակաց, և բաժանեն յերկուս կարգս. Մահմետա-

(21) Ա. Լի. Անդղիարէն Էմի, ոգի փոքրիկ, ի սոցանէ ըստ առասպելաց որ բարին է և ալմիւ, բնակի յերկնս, որ շար և զգուելի, ի ներքոյ երկրի:

(22) Տիմոթեոսեանէ, Յունարէն. ի բառիցս գէմեն, ոգի, քաջ, և մանկա, երկիւղ:



կածք (շարիք), և անհաւատք (չարք), ամենեւին զմի ծագումն ունին այս ինքն ստեղծան ի հրոյ նախ քան զԱդամ. զիսաւոր կայան նոցա է ի լիւրինան Աովկասու. Մինչև ցարաքազործութիւն մարդայն կառավարէին զնոսա իշխանք մի զկնի միոյ թուով 72. և ի բաց առեալ զվերջինն ամենեքեան անուանեցան Սիւլէյման (Սողոմոն), իսկ վերջինն՝ Հան, յորմէ նոքա առին զանուես Հին կամ Ճին, սմա և ցիղի նորս տան Արաբացիք զամենայն մեծամեծ շինուածս զօ. զբրդունս և լն. որոց շինութիւնն ըստ նոցա թուի անհաս մարդկային զօրութեան. թէ հարցցէ որ զԱրաբացին, ով է հիմնադիր հոյակապ շինուածոյս, պատասխանէ իօղոյն, Հան-ին. Հան, այս ինքն Հան որդի Հանայ. քաջք ուտեն ըմպեն և ծնանին որպէս ի մէջ համաստիցն իւրեանց նոյնպէս և յարակցութենէ ընդ մարդկան. ի այն միտս պատմիչք Արաբաց զնեն թէ Քալբիս մեծ թաղուհին Սարաշի՝ որ ի տեսել Սողոմոնի՝ ծնեալ է ի քաջէ. յորմէ առեալ և զիմաստութիւնն. ընդ որ դարմադաւ Սողոմոն. Ասեն Արաբացիք թէ քաջք կարող են առնուլ զամենայն կերպարանս գաղանաց, ծառոց, սեանց, քարանց, կայծականց, և շրջանայիկ հրոյ. մեծ թշնամի նոցա երկաթն է, ուստի Արաբք յորժամ տեսանեն զսիւնածեւ բարձրացեալ փութորիկս, և փաղատակուն կայծականց, աղաղակեն “el hadid”, (էլ հատիւ) ով երկաթ, յուսալով պակուցանել զքաջն և անվնաս զերծանիլ. Ի միջոցս ամոցն պահոց (Բամազանայ), Աստուած փակէ զքաջս առհասարակ զբարիս և չարս՝ զի մի փրդովեացեն զուղղահաւատս յամսոցն սրբութեան. յոյժ զիւրազրդիւք են քաջք և վրէժխնդիր. ուստի պարտ է զգուշանալ յրնկենայ ի վերայ նոցա իրս, կամ ի հեղիւր զսորօք ջուրս և այլ ինչ այտպիսիս. վասն զի ի վրէժ անարգանացն հարուածովք պատժեն զայնպիսին, մահու չափ. նաև ըստ կարծեաց Արաբաց սոքա գտանին յամենայն տեղիս. ուստի յրնկենուլ կամ ի հեղուլ ինչ ասեն (թէօղիւր, թէօղիւր), որ է զգուշացարձք. և այս կարծիք այնչափ հասարակեալ է ի նոսա, զի թէ զիպեցի ումէք խեղութիւն կամ յանկարծական մահ, քաջաց զրեն զայն պատիժ. — Հարցի եւ ցկին

ոմն, որ ունէր զմանուկ սապատողն, զպատճառ վնասու որդւոյն, և լուա պատասխանի թէ՛ յաւուր միում մանուկն ի ձեռացս յերկիր անկաւ, և շիթթեալ մոռացայ ասել Թէսթիւր, վասն որոյ քաջն՝ յորոյ վերայ անկաւ, եհար զնա և վնասեաց. . .

“Երկրորդ տեսակն խօլականաց՝ են չարագործք. վասն այնորիկ ի նոցանէ առաւել երկնչին. սոքա որպէս և առաջինքն, կարեն փոխիլ ի զանազան կերպարանս և բնակին յառանձին և յանշէն վարս, առաւելապէս ի գերեզմանս, և ի դաշտըս պատերազմականս, ուր կորցն զմեռեալս և ուտեն. բաղում անգամ և զկենդանին. սոքա ևս ծնունդք են հրոյ, ծնանին նաև ի յարակցութենէ ընդ իրեարս և ընդ մարդիկ առ ի տկարացուցանել զզօրութիւն սոցա և առաջնոց. ի կիր առնուն լըհմայիկ (ледовъ). յայսցանէ բնոր համարի այն որ պարունակէ յինքեանն զիննսուն և զինն անուանս աստուծոյ կամ մարգարէին (Մահմետի). զայսպիսի ազատարար զիրս կարեն գրել և քրիստոնեայք՝ որպէս տեսի ես զոմանս, զի աղաւթին զքրիստոնեայս և զհրէայս գրել վասն նոցա ըզհրմայիկ. և հաւատային զմի և նոյն զօրութիւն և ազդեցութիւն ունել նոցա, որպէս գրեալքն ի Մահմետականաց. բաղում անգամ և զայնպիսի իրս ի կիր առնուն, որ ամենեւին ի տարբեր միտս է շինեալ յայլոց. տեսի ես զԱրար ոմն թափառական (Բեղուին) որ կախեալ էր զպարանոցէն ծածկոյթ տփոյ ձխախտոյ շինելոյ ի նիւրեմբեր. յորում նկարեալ կայր փունջ վարդի և մրկնականջ 23) մակագրեալ վայելուչ իմն, և հաւատայր աներկբայ, փրկիլ նովաւ ի հարուածոց վիրաց, ՅԱրարիս ի հայրենիս զիւթից և կախարդաց ջրեղոյնս հաւատան յայսպիսիս. անդ են և գաղտնի արհեստք, յորմէ ամենեքին երկնչին, և ոչ որ կարէ հասու լինել. բաժանին յերկուս կարգս. ի բարիս և ի չարս. բարի ասի՝ որ զօրութեամբ և ազդեցութեամբ բարեաց քաջացն գործի, ուղղեալ ի նպատակ բարի. իսկ չար՝ որ ներհակ առաջնոյն՝ ծառայէ անտից, վրիժու, ազահութեան, և լն. և լինի զօրութեամբ չարաց.



այլ աններելի և դատապարտելի համարի վերջինս, Բողոք գիտութիւնն Արարիոյ կայանայ ի գիտելն զկախարդական երեւելի հնարս. որոց զօրութիւն հարկաւ ներգործել տայ խաւարային ոգւոց. ի յիշատակելոցդ որ բարին է, և անմեղադրելի կացուցանէ զմարդ ի խնդրելն զօգնութիւն քաջաց, նա

Եւ. Իւլ. Էր. Բաւման, գիտութիւն վերաբերեալ ի բարին, որ և աօր գիտութիւն ոգւոյ սովաւ մարմ է փարատել զհիւանդութիւնս, գտանել զկորուսեալ կամ գողացեալ իրս, ի ծուցանել զանձրեւ, և իւր հանատես եղէ և նա զօրութենէ գիտութեանս յարեւելս. այլ անդանօր կամակատար ոգի, խեղճն էր անանգորր. մեծազին իր ինչ գողացեալ էր ի տանէ տաճիկ զնկապետի ումեմն և ամենայն հանգամանք կարծիս տային լինել միոյն ի ծառայից. կոչել նա զնկապետն զտերմիշ մի Արար, որ ճանաչիւր քաջահմուտ գիտութեանս. կալան յառանձին տեղուդ զճառարս տերմիշն առեալ ի ձեռն զսեաւ ագաղաղ եղեն, և աղօթս արարեալ զանազանս ի գէմն հրեշտակաց և քաջաց՝ հրամայեաց ծառայից ծակել ասղաւ զմիս նորա, պնդելով թէ յորժամ ձեռն յանցաւորին մխտցի ի նա, իսկոյն հաւ խօսեսցի. մի զինի միոյ եկին ծառայք մատչել անդէն ի փորձ. և տերմիշն զգուշութեամբ գիտէր զնոսա. յայնժամ գողացողն՝ որ աներկիւմն էր ի զօրութիւնս քաջաց, և ի գիտութիւնն տերմիշն, գուշակելով զմօտալուտ վտանգն, զգողի հարաւ. և տերմիշն յայտ է թէ չկամեցեալ թոյլ տալ նմա դալ և ի փորձ, զյանցանս եղ ի վերայ նորա. և նա անդէն խոստովանեցաւ:

Եւ. Բաւման, գիտութիւն գրելոյ զբազմազօր փրկարար հմայել. արդիեալքն և դատապարտելիքն, որք և անուանին գիտութիւն սատանայի, նա

Եւ. Բաւման, ունելով զայս գիտութիւն՝ կարէ մարդ նիդակաւ կամ վաղակաւորաւ ծակել և հատանել ըստ կամս զմասն մարմնոյ, առանց վէրբս և սպիտ թողլոյ. այս գիտութիւն տայ կոչել և զքաջաց:

Եւ. Բաւման, գիտութիւն աւազահմայութեան. սովաւ ի զրութենէ անկանելոյ քարանց և խնցիմորթաց ի վերայ աւազոյ, գուշակեն զապագայ բաղտ մարդոյ:

Եւ. Բաւման, գիտութիւն փոխելոյ զմարդ ի կենդանիս և յայլ իրս. սղարսալին առաւելողէս բրնակիչք Մասկաթոյ հարաւային արեւելեան Արարիոյ իրրեւ առաջինք և կիրսուք այսպիսի անարդ գիտութեան. Սորա՝ թուի թէ փոխանակ յանձանց ի բաց մերժելոյ զայդ նախատանաց առնուն, ջանան ևս քան զևս համբաւ հանել ի նմին, առ ի կրկեղուկս արկանել ի զրացիս իւրեանց. Հարցի նա զայսմանէ ցՄասկաթայի վաճառական ոմն, ոյ հաստատելով զլուեալս իմ, սկսաւ պատմել ինձ զհետեւեալք. Աւաճառական ոմն ի Մասկաթ խոստանայ այլի կնոջ. Դիւմ ամուսնանալ ընդ նմա, այլ զինի զգլխացաւ. և առ ի խոյս տալ ի նմանէ եղ ի մօր գնալ ի Բասսորայ, ասելով կընտն թէ կրթամ գործով, և յետ այսպիսի ժամանակի դարձայց կատարել զխոստումն իմ. իսկ այրին՝ որ յառաջագոյն զբացեալ էր զսոն սիրոյ նաւաղումն, ոչ պատրեցաւ ընդ բանս նորա. գիտաց զպատճառ մեկնելոյն, և իբր զբաւական խնդրեաց զքանի մի հիւս գլխոյ նորա. ուրախացաւ այրն ի միտս իւր, զի զիւրաւ կարաց բաժանել ի նմանէ. ուստի աճապարեալ առ վարսապիւրայն, պատուիրեաց հատանել զհերս զխոյ իւրոյ և ծրարել ի թղթի. իսկ վարսապիւրայն, հմուտ ամենայն կախարդական արհեստից քաղաքին, գիտաց զվասն էրն և զվնասակարութիւն իրին. եհարց ցայրն զպատճառ խնդրելոյ հերաց, և նա պատմեաց նմա մի առ մի. յայնժամ խորհուրդ տայ նմա չարկանել բնաւ ի ձեռն կնոջն զհերս զխոյն, այլ հատանել փոքր ինչ ի հերաց սեւաւայծու և տալ յայտնելով և զպատճառն. զի թէ ոչ դարձցիս ասէ ի ժամանակակէտն, փոխօխութիւն լիցի ընդ այժն. լուեալ զայս առն արար ըստ խորհրդոյ նորա և զայժն տարաւ ընդ իւր ի Բասսորայ. անցին քանի մի շաբաթք ի վերայ կէտ եղևոյ ժամանակի, և ահա ի միում առաւօտու փոխանակ լսելոյ առն զսովորական ձայնն այծու, լսէ զխանչ անախորժ. և երթեալ տեսանէ զզրուի կենդանւոյն ի խօզնին փոխեալ:

Եւ. Բաւման, մասն գիտութեանս Եւ. Բաւման, ի կիր տունուն զխաւորապէս կանայք ի գերել զմիտս արանց կամ յառնուլ զգրեթ յանհաւատարիմն սիրելոյն մահուամբ կամ այլով



պատուհասիւն Պատմէին թէ, կին ոմն բարձի թո-  
ղի լիալ ի հոմանեցին, էառ զօճառ, և ասացեալ ի  
վերայ բանս ինչ ընկէց ի ջրհոր, որչափ լուծանէր  
օճառն ի ջուրն, և այրն ընդ նմին կրժալով կր-  
ժայր և տկարանայր. մինչև ի սպառնին, սպառե-  
ցան և աւուրք կենդանութեան նորա, .

Իւլմէն - Նիւրիս, աստղաբաշխական գիտու-  
թիւն. յոյժ յարգոյ մինչ ցարդ առ Արարացիս և  
առ արեւելեանս առհասարակ. նոյն՝ որ ինչ գիտու-  
թիւն գուշակելոյ զսպազայն կրկուց անձանց ըստ  
նշանակութեան թուոյ տառից անուանոց իւրա-  
քանչիւրոց. զայս գիտութիւն ծածկեալ պահեն  
խնամով յոյժ, որում չկարացի բնաւ իս հասու-  
լինել, .

Իւլմէն - Քիւրիս, տեսի ևս զերկուս հետեոյս  
այսր գիտութեան. յորոց մին պնդէր, թէ  
կարող է յօրինել զոսկի իւրեւ հարցի ցնա  
զպատճառ աղքատութեանն իւրոյ, կրկնեաց, թէ  
« քաջք հնազանդին ինձ առնել միայն զայնչափ,  
որ յնու զառօրեայ պիտոյս իմ. առաւել ինչ ոչ  
կարեմ », իսկ միւսն, որ թուէր պարզափօս որ,  
խոստովանեցաւ, թէ « վատնեցի զամենայն ինչս  
իմ, և մինչև ցարդ ընդ վայր էանց ճիւղն անձին  
իմոյ. թերեւ հասից նպատակի իմոյ, այլ սա ոչ  
խոստովանէր զօգնութիւն քաջաց ի գործս իւր » .

Բայց յայսմանէ, այս ինքն ի հաւատալոյ բա-  
ցարձակ իշխանութեան գերբնական զօրութեանց  
ի վերայ մարդկային բաղդի և գործոց, հաւատան  
Արարացիք և ի կորստաբեր աղբեցութիւնս չար  
աչաց, որ դտանի և յԵւրոպայ, առաւելագէս ի  
հարաւային կողմանս նորա. բայց առաջինքն դի-  
տեն ի կիր առնուլ զզանազան եղանակս՝ ի փրկ-  
կիւ զանձինս և զընտանիս ի չար աչաց. որպէս  
կապել զհմայեկ ընդ շգնոս (կոճակ) մանկանց  
կամ զկապոց ինչ լցեալ սոխով, աղիւ, ևս և  
հողով գերեզմանի մարգարէին, որ առաւել ըս-  
քանչեղագործ համարի ի նոսա. իսկ ի վերայ զը-  
բանց առկախն սովորաբար զսոխ և զպարկս  
պաղլեղի, աղի, և ինչ Թափառող Արարացիք (Պե-  
տէւին) 24) առ ի պահպանել զուխտս իւրեանց ի

Ֆեասակար աչաց՝ զոր ինչ միանգամ դտանն ի  
ճանապարհին արկանն ի պարանոցս նոցայ, որ-  
պէս զհին մուճակս, հանդերձս, պայտս և ի. բաց  
աստի ի թէ որ յԱրարաց կասկած էառ թէ չար  
ակն հայեցաւ մախանօք ի վերայ իւր կամ որդոց  
իւրոց, ի զարձուցանել կամ տկարացուցանել  
զվնասն, առնու կտոր մի պաղլեղի ըստ մեծու-  
թեան ընկուղոց, արկանէ ի հօր, ասացեալ կրիցս  
զառաջին և զվերջին դուխս Աւուրանին. իւրեւ  
պաղլեղն այրեցեալ զառնայ ի փոշի, խառնեալ  
ընդ կերակուր ինչ տան սեւա շանն յուտել. այլք  
փոխանակ պաղլեղի ոյրն զմասն ինչ հանդերձի  
նորա որ անկաւ ընդ աղբեցութեամբ չար աչաց.  
և ասեն կրիցս զառաջին դուխս Աւուրանին. իսկ  
կանայք նոցա առնու զթուղթ և ծակեալ զայն  
ասղաւ, ասեն. սա է ակն այս ուրուք, որ մախա-  
նօք ակնարկեաց յաւ. և յորժամ մեկնի ի տանէ  
նոցա այդ որ կամ կին, զորմէ կասկածն լինել  
չարակն, բեկանն զանօթ ինչ կաւեղէն զկնի նո-  
րա, .

« Ոչ սակաւ աղբեցութիւնս ունի ի վերայ  
կենաց նոցա և կրպն 25) եթէ կրպնաց որ ի  
զիշերի և մեկնեցին զայն ի վնաս, թողու զամե-  
նայն գործս իւր և զառնայ իսպառ ի խորհրդոցն,  
չգործել զկամեցեալն՝ թէ և կարէր լինել նմա օդ-  
տակար զամենայն աւուրս կենաց. Պատմիչք Ա-  
րարաց այսպիսեացս բազում ունին օրինակս.

(25) Դժբաղգարար այս ամենայն նախապաշարմունք յԱ-  
րարացոց անտի ի մեզ արմատ արձակեալ մինչ ցարդ մնան  
անընկելի Ուր անգիտանայ ասել, թէ Եփմէրտի տաացեալ  
կրպնանն օրչափ յարգ և գին գտանէ ի Բողոզուրդս մեր.  
նա թէ առաւել քան զբազում օգտակար գրեանս. մաս ի  
տուն գիւղացի քահանայեց և տերացուաց, ոչ այլ ինչ գիրս  
գտանես անգանօք, բայց թէ Եփմէրտի, և առ գրան նոցա  
քանի քանի անձինս, զոյգ գուրպայ կամ հաւ ընդ անթոփք  
եկեալս ի խնդրել զմեկնութիւն երազոյն, և զգուշակութիւն  
աւուրց, զի յերպի ու աւագ ետես, զինչ է արդեաւ, — ոչ աւալ  
ոսձիկ է. . . . . ի բազանիս լուացաւ, — ոչ չարաբանօք ոսձիկ  
է. . . . . զոմէշ ետես, — ոչ շահ և ուրախութիւն, էր վասն,  
զի գոմէշ է. ոչ զգում է կիր, — հիւանդութիւն է. . . . . նախք  
ետես, — աւագ է. . . . . որ յարարեթութեամբ, ոչ վանք և արեղայ  
ետես — նեղութեան ամբիւն է. . . . . էր վասն . . . . . կամ  
թէ բարի է, ասէ, արդեաւ օրն թէ վատ, ոչ սերմանել տեկել ի  
ճանապարհ երթալ, հիմն արկանել յաղբեղի. թէ ոչ. . . . . հի-

(24) Բեզուին (Պետեւի), Թափառական Արար, որ կեաց  
աւագակութեամբ



եկե՛ք որ պատմէ այլում՝ զանուրջս՝ գիշերոյ՝ որ  
ունկնդիրն կայ՝ պարտի ասեղ անշուշտ՝ « Բէյր  
ինչալահ » (տացէ տէր զբարին)։ յորժամ ըմբա-  
փի որ յազմկալից տեսնէ՝ հարկ է նմա երիցս  
թերանել ընդ ձախն կոյս, և երիցս ասել զառա-  
ջին և զվերջին գուխս Ղուրանին, զի զերծցի ի  
փորձանաց։ Եւ թափառական բնակիչս Հադ-  
րամաւուայ հարաւային մասին Արարիոյ գոյ և  
այս նախադաշարումն, զոր ահա աօրկ ի մէջ բե-  
րեմք։ Եկե՛ք որ, ասեն, ի մէջ քաղից առնէ զայլ  
որ ընկողմանեալ. ոչ միայն զհիւանդութիւնս զոր  
ունէր, այլ և զոր ունեւոցն է յապալս՝ թափէ ի  
վերայ նորա։ Դէպ եղև երբեմն զի ուղղեցոյցն իմ  
լուցեալ էր խարոյկի, և թափառական Արարա-  
ցիք նստէին շուրջ զնովաւ. եւ անտեղեակ սնտոխ-  
պաշտութեան նոցա՝ քայլս առի դմով՝ ի նոցա-  
նէ առ ի վստել զգլանակ իմ, յորկառ անգէն  
յանկարծակի այրն, և սկսաւ հայհոյել զետ  
նոյնպէս և ուղեկիցն իմ, և ի հարցանել իմ  
զյանցանս՝ իրրե լուայ թէ վասն անանցելոյ ի  
նա զնկրկայ և զապարայ հիւանդութիւնս իմ,  
առ ի անգորրել զվրդովեան յանձն առի ընկող-  
մանել ի վերայ գեանոյ և նա ընդ իս զնոյնն ա-  
բար, որ ինչ յառաջն եւ և ապա սկսաւ ուրա-  
խանալ յոյժ, զի ոչ միայն ըստ կարծեաց իւրոց  
զարձոց ի գլուխ իմ զցաւս իմ, այլ և զկարան,  
զկեկալան և զգաղոցն։

« Ըստ օրինաց Մահմետականաց անմարտըր,  
այս ինքն անընդունակք աղօթից համարին՝ որք

ւտեղն սղեանայ թէ ոչ, կորուստն գտանի թէ ոչ, որ ծանօթ,  
հեզ և խանար՝ լինի թէ ոչ, կամ շնորհաւոր և պատերազմայն,  
վայ այնմէկ, ում պատգամ տուաւ Դեղփեան թէ « օրն չէ  
բարի, մի գնեք, մի վաճառեք, մի ի դուքս ելանք » և  
վասն, « զի այսօր քակեաց հարուգողոնս որ գտաճարն, մազք  
այսօր բերին զընծայսն, հերովդէս այսօր խարեցաւ ի մա-  
զոցն » և նրա և նրա

Որովս արգեօք գովութեան արժանաւոր լինէին սրբազան  
քարոյիք մէր, եկէ՛ք փոխանակ ամենեցուն յայտնի և դարա-  
ւոր ժամանակաց հետէ կրկնեալ և քրքրեալ նիւթոց, երբեմն  
յանձն առնուին հաճութեամբ զայսպիսեացս առարկութիւն ա-  
բարեալ ծանուցանել ողորմելի ժողովրդեանն զստութիւնս և  
արևատաքանց հանեալ զնախադաշարումն և աւելորդապաշտու-  
թիւնս, տեկել ի տեղի նոցա յանգատանի մտաց սերմանա ա-  
ռաքեալեան ալգափրկական և հոգեշահ խրատաց բարեաց։

ունին զբորոտութիւն կամ զայլ անոս պայսիսիս,  
դարձեալ որք հոգեցան ի գէշ անսանոյ և որք ընդ  
կանայս անկան, մինչև առաջինքն չգտցնի դու-  
ռողջութիւն և վերջինքն չկատարեցնի զօրինա-  
սահման լուացումն, չկարեն աղօթիս (նամազ)  
մատուցանել. եկե՛ք ունաղ զմի ի վերագրեալ ա-  
րատոցք զառաջինն յառաօտու ողորմն եւ ու-  
մեք, անբաղդութիւն առ թեաց նմա, և եկե՛ք և  
մուտ ի տուն հիւանդի, վատթարագոյն գտանի  
հիւանդն։

« Արարացիք յամենաշէն զիսպոյ անգամ  
հանեն մեծ ինչ նախադաշակութիւնս՝ որ ունի  
միշտ աղղկեցութիւն ի վերայ ամենայն ձեռնար-  
կութեանց նոցա, տեսի եւ զգունդս թափառա-  
կան Արարաց (Պէտէմէ) որք երթեալ յառաջա-  
կել, դարձան յետ քառսրջ ժամու, ըստ որում  
տեսեալ էին օձ սողուն ի ճանապարհին, վատ գու-  
շակ է դարձեալ յորժամ յառաօտուն մինչև  
յլուացումն խորտակի կամ բնկանի ինչ, կամ թէ  
խեղցն ընդ արտաքս ելանելն ի տանէ երեսցի  
վայրենի (թուշուն 26). իսկ թէ (թուշուն կամ օձ ի  
բաց գնան ի ճանապարհէ, բարեյաջող իրաց ա-  
ռի՞նք վարկանին. ևս և ըստ անհաւասարութեան  
մորթոց թիկանց ուղտոց և ոչխարաց հմայն  
դարձեալ բարի կամ չար հիւանդութեան հետե-  
ւումն։

« Որպէս Եւրովպացիք, նոյնպէս և Արարացիք՝  
նշանաւոր աւուրց տան բարեյաջող կամ վնաս-  
առիթ աղղկեցութիւն ի վերայ գործոց, միայն վեր-  
ջինքն ինչ ինչ տարբերութեամբ անբարեբր հա-  
մարին, կիրական օր մահաւան մարգարէին. երկու-

(26) Ի մէջ անուսումն մասին հասարակութեան Ռուսաց  
նախադաշարումն ձախող իրաց առիթ տայ կարծել, յորժամ  
յեկանելն ի տանէ, կամ յերթան զճանապարհայն հանդիպեցի  
ումեք հոգեւորական, ուստի բազում անգամ պատահի զի  
տեսեալ զհոգեւորական թշնմեն ի գեան գի զերծցին ի ձա-  
խողութենէ, կամ տեսեալ զի յառաջոյ դայ, ինքեանք զկայ  
առնուն, մինչև նա անցէ. օրեւք տէրութեանն պատմեն  
զայսպիսիս, ըստ որում մեղանչեն ընդ դէմ պատուոյ այլոց։

Առ մեզ չարագուշակ է, յորժամ ոք մտադրեալ ելանել ի  
ճանապարհ կամ ձեռն արկանել ի գործ ինչ անդէն ինքն կամ  
այլ որ փոռցայ միանգամ, — համբեր ասեն, (սարբ եկաւ)։  
Իսկ եկէ՛ք երկիցս փոռցայ, սուրբանան զի յաջորդութիւն



չարածի և Չորեքշաբաթի, յորս չարչարեցան բազումք ի սրբոց նոցա, բայց զհաւորապէս Շաբաթ օրն և վերջին Չորեքշաբաթն Սափեր ամսոյն, ի սոյն աւուրցս են և բարեյաջողք, վասն սահմանեալ զործոց, որպէս Սիրակէ վասն պրսակատարութեան, և Հինգշաբաթի, վասն լծողոյ դարին, եթէ անախարհութիւն Բացրամին անկանի ի վնասագոյնեկ աւուրս՝ բարի է յայնժամ օրն, բարի են և առջին օր ամօցն որ և լցէ, և Ուրբաթն վերջինս, զի նոցին Սիրակէն է, ուստի և անուանի Էլ-Փատիլ (ընտիր), այլ աւուրք չունին զնշանակութիւնս։

Տեսի ի Կորի զեկեղեցին Հայոց նորակառոյց, ոչ այնչափ շքեղաշէն, յարեմափց էր պատկեր Աստուածամորն, և քարկոծման սրբոյն Ստեփաննոսի, ոչ ի թուս ըստ Յունական ակործի, այլ ի ակիտակ գէմանկարեալ, Եկեղեցին չունէր ըզքանդակս և նկարս, էր շինեալ ի քարանց և յաղիւսոյ, ըստ օրինակի այլոց շինութեանց և եկեղեցեաց Արաստանի։

Կորի ի լիզու տեղական, նշանակէ լեռան, օտիցէ լերէն Բորզնայն Ստարոսին և քաղաքան՝ ի վերայ անանձնացեալ բազումք ըրոյ միտմ գտանին աւերակք բերդի, ի ստորտա լերինս ընթանայ դետ սրաւաշ, մերձակայ սահմանք բեղմնաւորք են և զարգարուն բուսականօք, աւերեալ ամրոցն օւնի զերկիւս անցս, մի ի քաղաքին

սպասէ նմա, դարձեալ, եթէ քանի մի վայրեան անթարթ պաղեցան կացին արեւանուէք աչաց ուրումն, (սովորական ինչ է մարդոյ որ ի խեղճման մտաց ընկղմի) ճշան է թէ հիւր դայ, եթէ ի թիւեքն գնաց, պատասխանայ թուաւ ի բաց, հիւր դայ, եթէ կատուն լուանայ թաթիք գերեւս իւր, հիւր դայ եւն, եւն։

Որչափ շատ և շատ են այսօրինակ աւանդութիւնք և նախապաշարմունքք ի գեղջուկս և ի գաւառաբնակ ժողովուրդս մեր, (եթէ չասեմք և ի քաղաքս), այս և ընդ այն մի երկուսոցի թէ քիչ խաղարկութիւնն կարէ նշմարել ի նշան ոչ սակաւս մնացեալս ի նախնի կառապատական դարոց անտի, յորս անտխաղաւթիւնն ի մէն մի զիպաց և քայլից հաներ հետեանս, բայց ամառս զի ի մեզ ցարդ ոչ ոք փոյթ յանձին կալու հետազոտութեան դոցին յիշատակելոցը և նմանեաց, որք ի դաւառս գաւառս առճամբարութեան և բանափութեանն, պոսկի դափնի հիւսկին ի զլուս այնք, որ գանձն ի դոցին տայր քննութիւն և ի դէր։

Կուսէ՝ ուստի և ևս մտի, միւսն ջրոյ, ուստի տանէ ճանապարհ գաղմտի յաւնուէ զջուր, ի վեր անդր երկու որմունք և աշտարակք կանգուն կային, այլքն յաւեր, նկատին յաւերսն մնացորդք կամարաց, ներքնատանց, ջրհորոց, և արգելարանաց, յերկիւղալից ժամանակս բնակիւք Կորու, աստ փոխադրէին զինչս խրեանց, շատք ունէին և սեպհական փոքրիկ տունս, զորս տային ի բնակութիւն այլոց կարն սուղ գնոյ։

Աւանդութիւնն զիս ի Կորի տեղացի Հայ ոմն պատմեաց ինձ զհետագայ ժողովրդական աւանդութիւնն, ոչ սակաւ հետաքրքրական, Հաղար ամօք յառաջ բոլոր երես դաշտիս ծածկեալ էր ջրով մեծատարած լճի միոյ ի միջի լճին կղզեացեալ կայր այս լեռան, յորայ վերայ շինեալ է յիշատակեալ ամրոց, դէպ լինի երբեմն լծադուհոյն (Արագ) Թամարայ պալատանօր ի զբօսանս որսոյ, ունկոյթ ի ձեռն բաղէ ընտիր նմա սիրկի, որ զհետ պնդեալ աղանձոյ չեհաս նմա, այլ անցեալ ընդ լիճն հանգեալ ի վերայ կղզոյն, կամ լաւ և օտապի ի վերայ լերին, դարձ չարաբեալ ընդ այնչափ կոշ և աղաղակ լծագուհոյն, ուստի խոտատեալ լծագուհին տալ զկէս լծագաւորութեան իւրոյ այնմ որ դարձուցէ զբազէն, անպէն քաջախիտ ոմն յաւանդանոյն մտեալ երկփայտեալ ընդ լիճն ի լող, և հաս կալու գրագէն, այլ ի դարձին հեղձան ի ծախն ալեաց ջուրց և ինքն, և ձին և բաղէն յայնժամ հրամայէ լծագուհին բանալ անցս և անկ զջուր լճին ի Կուր գետ, իսկ ի վերայ լերինն կանդէ զայս ամրոց, ուր անցոյց զմնացուածս կենացն ի տխուր տանձնութեան։

Աւանդութիւնս այս յուշ անէ զուանդութիւնս Երոզականս ընդհանրապէս, այլ ի մասնաւորի զԿերմանականս ժողովեալս եղբարք Արիմի — Ժողովրդական աւանդութիւնք և ասածք հնացոյն են քան զայժմեան ազգս, պատկանին միայն նախնասէր ազգի, սկզբան նաև մարդկութեան, յորմէ յառաջ եկին որիշ որիշ ազգք և պահպանեցին զայսոսիկ հարստութիւնս ի զանձարանի յիշողութեան հազարաւոր ամօք, աւանդութիւնք փոխփոխին միայն ըստ անձանց և տեղեաց, այլ գլխաւոր մասունքն և բովանդա-



կուժիւն իմաստից կան մնան նոյն Ինն վերսթ հետի ի հետեւեալ Զալի իջեանէն բոստի ի ձախակողմն ճանապարհին տեսի մեծագիր աւերակն՝ մերձ աննշան գեղջ միում՝ բարձրաբերձ որմունք զրաւեալ ունէին զընդարձակ տարածութիւն. դուռն անկանէր ի հիւսիսակողմն և ի վերայ նորա աշտարակ. ի ներքս աւերակք մանունց և մեծաց շինութեանց. պատմեցին ինձ, թէ էր սա երբեմն նշանաւոր վանք անուամբս Սանթ-վարվազ, (զոր Քլաիրութ անուանէ «Յամթավիսի», վանք՝ այս ինքն վանք երից զխոց) ի միջակտի շինութեանցն գտանիւր հեղեղցին անմնաս կացեալ բաց ի քանի մի խախտուածոց տանեաց. այս հեղեղցի մի է յամենաչքնաղ և հոյակապ շինութեանց տէրութեանն Ռուսիոյ. արտաքին տեսք սորա և ներքին կազմուածն են ըստ Բիւզանդեան ակոթի. չորս մեծամեծ սիւնք պահպանեն զբարձր կաթողիկէն Տրապիզ (27) որ ունի զձե քառակուսի, վասն զի զմասն երկայնութեան նորա հասեալ ունի բնին. — Եթէ շինուած տաճարին ամբողջապէս առեալ Բիւզանդեան ճարտարապետական արհեստին գործ համարեցի, դարձեալ ինչ ինչ մասունք նորա առաջի առնեն մարդոյ խառնուրդս ճարտարապետութեան Յունաց, Գոթաց, Մալթիտանացոց. չորս հոյակապ սիւնքն են ի ճաշակ Գոթաց, կամարքն Բիւզանդեան, լուսամուտք քանդակք և նկարք Մալթիտանացոց. ի մէջ կաթողիկէին որպէս ընդհանրապէս ի Յունական եկեղեցիս է տեսանել՝ ներկաւ է Փրիչական պատկեր օրհնող աշխարհի. նկարութիւնն չերևի հնազոյն քան զվերջ ժէ. դարու, և է գործ Իտալացի արհեստաւորաց, որք պատահմամբ անկան ի Վիրս. այլ եկեղեցին անշուշտ հնազոյն է և թուի հիմնարկեալ յայնմ ժամանակի յորժամ Վրաստան սերտ յարաբերութիւն ունէր ընդ արեւմուտս, զուցէ և ընդ Հռովմ։ Իս համարիմ նա և թէ այս եկեղեցի՝

որպէս և այլ բազումք որք ի սահմանս տարածեալ ընդ մէջ Սեա ծովու և Պատկից, են գործք վախճանի միջին դարուց, յորս Գենուացիք իջեալն ափանց Սեա ծովու։

Յայտսիկ կողմանս առ ճանապարհաւ Տիփսեաց և յամենայն ուրեք տեսանին անհամար աւերակքք բերդից, ամրոցաց, մնացորդք պատերազմական, և ըստ պատմականին նշանաւոր ժամանակաց միջնոցն ի նմա դարուց. ափունք Պուրգետոյն ըստ յիշատակեցող նոյն են որ ինչ ափունք Բեյն գետոյն. այլ այս ինչ է զանազանութիւն զի զտեղեացս պատմութիւնն լռէ, չիք հիմնաւոր տեղեկութիւն, կամ թէ մնան տակաւին առանց հետադատութեանց։ —

Զուրի կաշեալ ի 10-ն Օգոստոսի եկաք ի Մցիսէթ, որ էր ի հնումն արքայանիստ քաղաք Վրաց մինչև 91489 ամն, յորում ամբողջ թաղաւորութեան փոխադրեցաւ ի Տիփսիս, իսկ այժմ՝ աննշան և փոքրիկ աւան. աւերակք եկեղեցեաց ոմանց վկայք են նախկին մեծութեան նորա. ըստ աւանդութեան զայս քաղաք հիմնեաց Սկիթոս որդի Քարթլոսի, թոռնորդին Նոյի. Մցիսէթ անկանի առ Պուր և Արաւ գետովք։

Աստ է մայր եկեղեցին Վրաց, յորում զօծուին ընդունէին կաթողիկոսք նոցա, իսկ ի Վրնումն թագաւորք. յորոց բազմաց մարմինք ամփոփին ի նմա Իսմին եկեղեցւոյ որպէս առանձին սրբութիւն պահպանի մասն հանգրձի Փրկչին \*)։

Այս եկեղեցի հիմնեալ որպէս աւանդի ի Ժ. դարու, աւերեալ է ի Լանկիթամուրայ, ապա կրկին նորոգեալ ի 1414 ամն 91424 ամն կանաչազոյն քարամբք, մի և նոյն ճարտարապետութեամբ՝ որպէս է եկեղեցին Սանթ-վարվազայ. շուրջ զնովա զոյ պարիսպ և հնոտի տունք բնակարանք քահանայից. որմունք ծածկեալք են միջակարհաստ նկարուք. և որպէս ինձ թուի

(27) Տրապիզ, բառ. Յունական, որ ըստ նոցա հնի Տրապիզայ, սեղան, կերակուր. յայնմնէ առեալ, Տրապիզ կոչի սեղանատուն կրօնաւորաց, դարձեալ մասն տաճարին, յորում յառաջին չորս դարս Քրիստոնեայք յետ պատերազմ ունէին զձաշ։

(\*) Ի Վերափոխման մայր եկեղեցին Մոսկուայի և յեկեղեցւոյն արքունի դրան Պետերբուրգայ գտանին նոյնպէս մասունք Փրիչական հանգրձի, զոր Արքայ Միլիցայ արքայ Պարսիցի տիրեն իւր Վրաստանի ընծայեաց կայսերն Ռուսաց Միկայէլի 3-ի սգորեանս։



գործք են Եւրոպացի արհեստաւորաց վերջին ժամանակաց. Ռուս ճաշակ զառաջինն մուծաւ ի Վիրս միայն յամի 1750. յորմն տաճարին հաստատուալ կայր բոլորակ քար մի՝ որ ունէր մերձ երեք ոտնաչափ տրամագիծ, ի միջի նորա խաչ մի կորնթարդ քանդակեալ. — Խաչք արեւելեան եկեղեցւոյ ունին զառանձին ձև ինչ:

Ի թագաւորութենէ Բագրատայ երրորդի՝ որ տիրեաց ոչ միայն Վրաց՝ այլ և Արխաղաց (1000)՝ սկսանի նշանաւոր ժամանակ պատմութեան Վրաց. որ յամի 1206 յաւուրս թագուհւոյն Թամարայ (զոր Վիրք միշտ թագաւոր անուանեն) առաւել պանծալի հանգիստացաւ. սա է զարաղուիս ազգային լուսաւորութեան նոցա. (յամի 1064 զրուածք Պղատոնի և Արխատոնի փոխեցան ի լեզու Վրաց). զկնի յառաջ դայ Վերացի ճարտարապետութեան ծնունդ առեալ ի Բիւղանդիականէն. Մայր եկեղեցին Մցխեթի կառուցեալ ի սմին ժամանակի, աւերեալ է ի ԺԵ. դարու ի Թամրղանայ, և նորոգեալ դարձեալ ըստ առաջնոյ ձևոյն: Ըստ աւանդութեան, այս եկեղեցի շինեալ է յօտարաշխարհիկ առնէ ումենէ. իսկ եկեղեցին Ստեփաննոսի Քիմիթոսի, յաշակերտէ նորին. ճարտարապետն տեսեալ զի աշակերտն զերազանցեաց քան զինքն, հատանէ զձեռն իւր, միւս ևս աւանդութիւն ուամիկ հասարակութեան ասէ, թէ կաթողիկոսայք երկուց եկեղեցեացդ Մցխեթի և Ստեփաննոսի Քիմիթեայ միացեալք են ընդ իրեարս անտեսանելի երկաթի շղմայիւ, յորոյ վերայ սուրբք երկուց եկեղեցեացքն անցեալ յայց երթան միմեանց: Աւանդի դարձեալ, թէ այսպիսի շղմայ մի միացուցանէ զվանքն Գերգիտայ որ ի վերայ Քվիմիշ-մթա լերին ընդ վրանին Աբրահամու ի վերայ Ապղեկի, և ընդ այն միանձունք առնեն ճանապարհորդութիւն:

Ամենայն ումեք բացերև և նմանութիւն սոցա ընդ Եւրոպական աւանդութեանցն. —

Ի մետասաներորդ ժամուն մուտ կալքք ի Տրիխիս (Թիֆլիզ), որ յետ Մցխեթայ մայրաքաղաք եղև Վրաց, իսկ այժմ համբուն երկրի որ յայնկոյս Ափկասու: Թիֆլիզդ անուն յառաջ եկեալ է ի բառէս Ֆիլիս (Филис). զայս անուն էառ այս

քաղաք ի մերձակայ ջրմանջրոց. ըստ որում արմատ բառիս օմբ (Ф) և օմբ (Ф) ի լեզու Վրաց նշանակեն ջրմ. և ի բառէս օմբ (Ф) և օմբ (Ф) ի լեզու Սլաւոնացւոց անունդ տեպիդ (тепид). ոչ այս ձայն Լատինականն իցէ Trepidus (Трепидус): Տիֆլիս, յայնմ կուսէ ուստի է սկիզբն մտից ճանապարհին, ի նմա, երևի քաղաք Եւրոպական, ուղղաձիգ փողոցք, միակարդ նորաշէն տունք, ակնախտիղ մթնաբանոցք, զրաւաճառանոց, զեղարան, սրբաբանք, արքունի շէնք բաղունք, հոյաշէն բնակարան կառավարչի կողմանցն, զմթեթաւոր եկեղեցիք, զանազանատարազ Եւրոպացի զգեստի, որք տեսանին ի փողոցս, և այլ այսպիսիք, ի միտս այցելու Եւրոպացւոյն զհայրենի երկրին իւրեանց զարթուցանեն յիշատակի զնմանութիւն նորա բերելով. Ձայս մասն հիմնեցին Ռուքք. իսկ միւս մասն քաղաքիս Ասիական ճարտարապետութեամբ և ձևով, ունի կրպակս, երկայն փողոցս, դարբնոցս, և շուկայս զերձակաց և կոշկակարաց. — Որպիսի՞ զանազանութիւն յազգս և ի կերպարանիս: Աստ խոնին բազմութիւնք զանազան ազգաց և ամենեքին զգնուռ զանազանս. Թաթարն զիւր զգեստ՝ յորմէ յառաջ եկեալ տեսանի յայտնի տարազն անուանեալ Լեհացի զգեստ. նիհարաղէմ և թուխ Պարսիկն զերկայն և զլայնն, արիասիրտ և համարձակ Քիւրդն զլայնազգեստ կարմիր և սպիտակ, Լեզգին և Չերքեզն զիւրեանց. և այսպէս անձնիւր յիւր տարազ և կերպարան տեսարան կաղմն զեղեցիկ, այս ինքն է աստ միայն ի հանդէս բերեալ լինին տիպք կերպարանաց և զգեստուց Ասիոյ և Եւրոպիոյ միանգամայն, զորանհրանար է գտանել այլուր:

Բնակարան իմ եղև աստ առ Զլարցի գաղթական ոմն Ջալցման անուն ի ձախակողմն Աուրգետոյ. Էր սա այր ընդունակ, հանճարեղ, առողջարար, յոյժ տեղեակ բարուց աղղաց և հանգամանաց կողմանցն, ըստ որում անձամբ շրջեալ էր ի տեղիս բազումս և տեսեալ զամենայն. ուստի ինձ պիտանի ի մասին տեղեկութեանց, Գտան ինձ և այլ պիտանի ծանօթք ի Տիֆլիս. Պ. Աոցերու, որ քաջահմուտ որ էր, այլ ոչ սիրէր հաղորդել այլում զոր զիտէրն. Նահանգապետ Պ. Գուրկո,



այր մեծարոյ և սիրելի որ ոչ սակաւ տեղեկութիւնս ետ ինձ, և օգնեաց ի բազում դէպս. կօշկակար Պետրոս . . . ուղեցոյցն և թարգմանն իմ Վիրդենբերգցի, որ ի մանկական հասակի իւրում եթող զհայրենիս և ընդ ազգակցաց իւրոց և համաշխարհայնոց եկն բնակեցաւ նախ մերձ յՕտեսսա, անտի ի դիւղ մի ոչ հեռի ի Տիփսեաց. եռանգուն դք գոյով սորա և անհանդիստ բարութ՝ ոչ սիրէր ի միում տեղեղ կալ. ճանապարհորդեալ էր ի համօրէն Ասիա, և ի Պարս թարգման կացեալ առ Աբրաս Միրզա արքայորդին Պարսից զամս ու թն, և յետ մեռանելոյ նորա դարձ արաբեալ առ հայրենակիցս Գիտէր զքանի մի լեզուս Եւրոպացոց և Ասիացոց. Գերմաներէն, Գաղղիարէն, Ռուսերէն, Չեքքեղարէն, Տաճկերէն, Հայերէն, Վրացերէն, Պարսկերէն, Քիւրդերէն և ըն. վասն որոյ անսպառ գանձ էր զամս իմ: — Զարմանալի թափանձիկ և սուր միտս ունէր մինչ զի յընթացս վնց շարաթու ուսաւ անթմիրի զլեզու մի՝ որում անտեղեակ էր միանգամայն. ընդ այսպիսի հանճարոյ, միացեալ էր և բանաստեղծականն աշխոյժ. գիտէր զանթիւ աւանդութիւնս, երգս և վէպս (մասալ, հէքիաթ) ազգաց, որոց ի տես չոքաւ, ուստի թէ դէպ լինէր մեղ ի միասին ննջելի երթալ ուրեք, ի տուէ կամ ի զիշերի զուարճացուցանէր զմեզ. թէ և իսկզբանն անդ դժուարանայր յամօթոյ ասելով, թէ առասպելաբանութիւնք և գեղջկական զրոյցք չեն արժան լսելեաց ուսեալ ճանապարհորդի. ալ իբրեւ յետ մի աւուրց մտերմացաք, ի միասին ուտելով, ըմպելով, ննջելով ևն, մերկացաւ ինձ զոր գիտէր:

Ի Տիփսեաց դէմ եղեալ եկաք ի մերձակայ գեօղ մի Գերմանացի գաղթականաց, ուր տեսաք զմեծահոգակ Գերմանացի բնախոյզն Գոկտոր Մորիկ Վազնէր, զբաղեալ ի կարգաւորել զհնագիտական և զհազուադիստ իրս երկրին. զորս ժողովեալ էր ի ճանապարհորդութեան իւրում: Սա արդ աւարտեալ զուղեւորութիւնն դառնայ յԵւրոպա յերեւան հանել զվաստակս իւր զպտուղս հետազոտութեանցն:

(Նոյնն էն):

## Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԿԱԶՄՈՒԻԼ ԿԱՄ ԲԱԳԿԱՆԱԼ.

Ներկայ տարւոյս Արարատ ամառոյց Ե-դ Գ-դ և Բ-դ թուոց միջ Հայր Վահան Բաստամեանցը իւր հրատարակած յօդուածովը աշխատասիրած է ցոյց տալ, թէ՛ ի՞նչ ազգերից, որպիսի անձինք դաղթելով Հայոց միջ և ընդունելով նոցա կրօնքն և լեզուն՝ միացած են նոցա հետ ազգութեամբ:

Նա իւր յօդուածոյն մակագիր դրած է այս խօսքը “ Թէ՛ ի՞նչպէս կազմուեցաւ Հայոց Ազգը, և հետեւաբար յիշելով նոյն ցեղերի Հայութեան ենթարկուելը և հետեւելով իւր յօդուածոյ մակագրութեանը ասում է “ Մեր ազգը նոյնպէս բաղկացաւ զանազան մասներից, իսկ զլեւաւորապէս երկու հեռաւոր և օտար ցեղերից, իւր այս համոզմունքը հիմնելով հայկական պատմագրի հետեւալ խօսքերի վերայ, զոր ասէ նա “ Հիշէ և աստանօր պատմութիւնը, հտրաւոյ կողմանէ դաշտիս այսորիկ, առ երկայնիւնստիւ միով լեւամբ բնակեալ յառաջագոյն արք սակաւք ինքնակամ հնազանդել զիւցազինն, : Խոր. զիրք Ա. եր. 22-23:

Հ. Բաստամեանցի սոյն մակագրութիւնը և հետեւընթաց կարծիքը ըստ բովանդակութեան յօդուածոյն պարունակելով իւրեանց միջ հակադրութիւն և երկբայութիւն մեր նահապետական ծագման և հարազատութեան մասին՝ պատճառում են ինձ յայտնել համառօտութեամբ իմ կարծիքս դորա համար, խնդիրն ազգային ըլլալով: